ՆՈՐՈՎԻ ՂՈՂԱՆՋԵՑԻՆ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՋԱՆԳԵՐԸ

Այսպես ավանդում է պատմությունը

Հայոց պատմությունն ավանդում է, թե քրիստոնեությունն Արցախ աշխարհ մուտք գործեց դեռևս մեր թվականության առաջին դարում: Մինչև 19-րդ դար երկրամասի քրիստոնյաներն իրենց ուրույն դերն ունեցան Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական կազմում:

Պատմական Արցախի հայության վերջին առաջնորդը երջանկահիշատակ Վրթանես եպիսկոպոսն էր, որ կոմունիստական անաստվածության տարիներին՝ 1932-ին, բանտարկվեց, իսկ մեկ տարի անց աքսորվեց Սիբիր, ուր և կնքեց իր մահկանացուն:

Հայրերի սրբազան հավատքն անթեղվեց արցախաբնակ հայորդու հոգում, իսկ լությունը եկավ փոխարինելու զանգերի զվարթ ղողանջներին:

Արցախցու նորօրյա պատմությունը

Գրեթե յոթ տասնամյակ անց Արցախ աշխարհում խախտվեց քար լությունը: Կրկին ղողանջեցին հայոց հավատի Տաճ զանգերը, ժողովրդի առջև իրենց դռները բացեցին Գանձասարը, Ամարասը, Շուշիի պատմական եկեղեցիները:

Արցախյան շարժմամբ սկիզբ դրվեց նաև հինավուրց երկրամասում բնակվող ժողովրդի հոգևոր կյանքի վերափոխմանը: Վերաբացվող եկեղեցիների կամարների ներքո հնչեցին աղոթք ու շարական:

Առաջին հոգևոր արարողությունը կատարվեց Գանձասարում, ճիշտ տասը տարի առաջ: Վարագա Սուրբ Խաչի տոնին թեմական առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը մատուցեց եպիսկոպոսական Ս. Պատարագ և ապա խոսեց հավուր պատշաճի քարոզ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, սփյուռքահայ բարերարների, արցախահայոց թեմի առաջնորդի, ՀՂՀ իշխանությունների համատեղ ջանքերով Արցախում մեծ շինարարական աշխատանք ծավալվեց: Կարճ ժամանակահատվածում վերանորոգվեցին, վերաբացվեցին և վերաօծվեցին տասնյակից ավելի եկեղեցիներ:

Հավատավոր արցախցին կիրակի և տոն օրերին նորաբաց եկեղեցիներում իր աղոթքն առաքեց առ Աստված՝ հայցելով Երկնավոր Հոր բարեգթությունն ու օրհնությունը:

Վերաբացվեց նաև Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին

Հոգևոր վերազարթոնք ապրող արցախցու համար դարձյալ տոն էր: Հունվարի 27-ին մեծ շուքով և հանդիսավորությամբ իր դռները հայ հավատավորի առջև վերաբացեց Մարտակերտի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին:

Համաձայն մեր Եկեղեցու Հայրերի պատվիրանների, առաջնորդ Սրբազանը, ԼՂՀ կառավարության անդամների, բարձրաստիճան այլ պաշտոնյաների, հրավիրյալների և մեծաթիվ հավատացյալների ներկայությամբ, հունվարի 27-ին հանդիսավորությամբ, Սուրբգրային համապատասխան ընթերցվածներով և շարականների երգեցողությամբ կատարեց եկեղեցու օծման արարողությունը:

Եկեղեցու լվացման և օծման արարողակարգից հետո, Սրբազան Հայրը Սրբալույս Մյուռոնով օծեց նաև տաճարում գործածելիք կահ-կարասին:

Ապա նորաօծ եկեղեցում մատուցվեց եպիսկոպոսական անդրանիկ Սուրբ Պատարագը: Օրվա պատարագիչն ու քարոզխոսն էր Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը: Դիմելով ներկա հավատացյալներին, Պարգև Սրբազանն ամենից առաջ կամեցավ, որ այս նորաօծ տաճարը դառնա յուրաքանչյուրի հոգու տաճարը, որ ամեն ոք այստեղ գա՝ իր աղոթքն Աստծուն հղելու՝ ի բարօրություն մեր ժողովրդի, ի խաղաղություն Հայրենիքի և ի բարգավաճումն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ